

247 ԱՅՍ Է՛ՇԻՐԻՄ ԱԶՆԻՒ ՄԱՐՄԵՆՅ
 ՄԱՐԻԱՄԱՅ ԶԵՆԱՂ ՏԻԿԼՈՅ՝
 ՄԻՐՈՂ ՈՒՍՄԱՆ ԵՒ ԴԱՆՃԱՐՂՅ
 ԵՒ ՇԱՐԱՂՐԻՉ ՄԻ ԲԱՈ [7] ԳՐԵՈՅ:
 ՍԱ ՄԻՐԵՑԱՒ Ի ԹԱԳՈՒՅԻՆՅ
 ԵԿԱՏԱՐԻՆ ՄԵԾ ԿԱՅՄՐՈՒՅԻՆՅ,
 ՅՈՐՄԷ ԷԱՈ ԱՆՈՒՆ ՊԱՏՈՒՅ
 ԿԼԵՕՊԱՏՐ ՊԵՂԵՅՈՒՅԻՆՅ:
 ՂՈՒՍՏՐ ԷՐ ՍԱ ԱՈՆ ՄԵԾԱԶՆԻ
 ԱՂԱ ՍՕՎԱԷՍ ՄԱՐԱՅԵԱՆԻ
 ԵՒ ԱՍՈՒՄԻՆ ՄԱՅՕՐ ՄԱՐԳՍԻ
 ԼՕՈՈՒ ՄԵԼԻԲ ԲԱԶԱՏՈՂՄԻ,
 ՈՐՈՅ ԴԱՍԵԱԼ ՕՐ ԿԱՆՃԱՆԻ՝
 ԱՐԴԱՄԱՐԴԵԱՅ ԳՈՅՍ ԱՇԽԱՐԴԻ,
 ՉՈՒԷԱՅ ՅԱՆԱՆՅՆ ՅԱԻՏԵՆԻ,
 ՈՒՐ ԴԱՄԱՅՆԻՑՍ Է ԴԱՅՐԵԵԻ.
 ԵԹՈՂ ՍՈՒԳ ՄԵԾ ԻՒՐ ԱՍՈՒՄԵՆՅ
 ԵՒ ՄՕՐ ԻՒՐՈՅ ՈՂՈՐՄԵԼԻՆՅ,
 ՆՈՐԱԲՈՂԲՈՅ ԱԶՆԻՒ ՈՐՂՈՅ
 ԵՒ ԲԵՆՆ ԻՒՐՈՅ ՄԻՐԵԼՈՒՅԻՆՅ.
 ԽՆՂՐԷ ԱՅԺՄ ՏԷՐ ԱՂԵՐՍԻՒ
 ՅԻՇԵԼ Ի ՏԷՐ ՄԻ ԴԱՅՐ ՄԵՐԻՒ,
 ԵՒ ՈՐԲ ՅԻՇԵՆՆ ՈՒՂԻՂ ՍՐՏԻՒ
 ՅԻՇԵ[Ա]Լ ԼԻՑԻՆ ՆՈՎԻՆ ԲԱՆԻՒ:

Ծնե[ա]լ ՅԱՄԻ 1765 ՄԱՐՏԻ 24 ԵՒ ԱՍՈՒՄԵՆՅԵ[ա]Լ 1789 ԴԵԿՏԵՄԲԵՐ] 5 ԵՒ Փ[ո]ԽԵԼ[ա]Լ Ի ԶՍ 1806
 ՕԳՈՍՏՈՍԻ 2 Ի Ա.Պ[ետեր]բուրգ:

Հրատ. Գր. Գրիգորյան, 48-49

248 Հյուսիսային կողմի նույնատիպ սալաքարերին՝ ծախից աջ փորագրված է.

ДРУГЪ СЕРАЦА МОЕГО, ДРУГЪ НЕЖНЫЙ И ЛЮБЕЗНЫЙ
 НЕ ВНЯТЕНЬ ТЕБЕ СТОНЪ, ПЛАЧЪ МОЙ БЕСПОЛЕЗНЫЙ.
 НЕ ВШИМЫЙ ВЗОРЪ ПОМЕРКЪ ИЗ ЗА ВЕСЬ СОНМЪ ДОБРОТЬ
 И СЕРАЦЕ ЧИСТОЕ УБЕЖИЩЕ СИРОТЬ.
 ТЕБЯ УЖЪ БОЛЕЕ МОЙ ДРУГЪ НЕ УКРАШАЕТЬ
 УЖАСНО ХЛАДНА СМЕРТЬ ВСЕ В ПРАХЪ ЗДЕСЬ ПРЕВРАЩАЕТ,
 НО ДУХЪ ТВОЙ ЖИВЕТ ТАМЪ ВСЕЛЕНІЯХ НЕБЕСЪ,
 ОНЪ ВИДИТЬ ИСКРЕННОСТЬ ВОЗДЫХАНІЯ И СЛЕЗЪ,
 КОТОРЫМИ ВЪ СЕЙ ЧАСЪ Я ПРАХЪ ТВОЙ ОРОШАЮ,
 СВЕРШАЯ ТРИЗНУ ЗДЕСЬ К НЕМУ МЫСЛЬ ВОЗВЫШАЮ.
 ... А СЛЕЗЫ МАТЕРИ И СЕСТРЫ ВЪ НИХЪ ОТРАДА
 ТЕПЕРЬ ИХЪ СДАНА...
 НЕ СТАВ СОПУТНИКОМЪ НЕВИДИМЫХЪ СУЩЕСТВЪ.

Միջին սալաքարին՝

ВЗОВИ КО ГОСПОДУ, ДА ДАСТЬ ИМЪ СТОЛЬКО СРЕДСТВЪ,
 ЧТОБЫ ЛЮТЫЙ СКОРБИ ИХЪ И МУКИ ОБЛЕГЧАЛИСЬ,
 СТЕРАИСЬ СЛЕЗЫ, ИХЪ ТЕРЗАНІЯ СМЯГЧАЛИСЬ.
 МОЛИ, БЕЗЦЕННЫЙ ДРУГЪ, ЗИЖДАТЕЛЯ МИРОВЪ,
 ДА БУДЕТЬ ИМЪ ЗАЩИТА И ПОКРОВЪ.
 МОЯ ЖЕ ПЕЧАЛЬ И СТОНЪ ТОГДА ЛИЖЪ ПРЕКРАТЯТСЯ,
 КОГДА С ТВОИМЪ МОЙ ПРАХЪ НАВЕКЪ СЪЕДИНЯТСЯ,
 ПУСТЬ ВЪ ЖЕРТВУ ГОРЕСТЯМЪ ОДИНЪ ДОСТАНУСЬ Я.
 СВЕРШИЛОСЬ СО МНОЙ ВСЕ! ПРЕСЕКЛАСЬ ЖИЗНЬ ТВОЯ.
 ОДНА ОТРАДА МНЕ ПИТАЛЬ ВЪООБРАЖЕНЬЕ
 СІЕ СЛАДШАЙШЕЕ С ТОБОЙ СОЕДИНЕНЬЕ,
 МОЙ ПРАХЪ ВМЕСТИТЬ СЪ ТВОИМЪ ПЕЧАЛЬНЫЙ И СЕЙ ЧЕРТОГЪ,

МЫ КУПНО УЗРИМЪ ТО КАК СВЯТЬ И СИЛЕНЪ БОГЪ.

249 Երրորդ (վերջին) սալաքարին՝ 5 տող.

ПОДЪ СИМЪ КАМНЕМЪ ПОГРЕБЕНО ТЕЛО СУПРУГИ
 СЛУЖАЩЕГО ВЪ ШТАТЕ КОММИСАРИАТСКАГО КОММИ-
 СИОНЕРА 8-ГО КЛАССА СЕРГЕЯ ИСАЕВИЧА/ ЛОРИСЬ - МЕЛИКОВА
 МАРИИ МОИСЕЕВОЙ ДОЧЕРИ, УРОЖДЕННОЙ САРАФОВОЙ, КОТОРАЯ
 ВЗЯТА БЫЛА ВЪ 1774 ГОДУ КЪ ВЫСОЧАЙШЕМУ ДВОРУ БЛА/ЖЕННОЙ
 И ВЕЧНО ДОСТОЙНОЙ ПАМЯТИ ГОСУ/ДАРИНЕЮ. ИМПЕРАТРИЦЕЮ.
 ЕКАТЕРИНОЙ АЛЕКСЕЕВНОЮ. И ПО КРАСОТЕ ЕЯ ЛИЦА НАЗВАНА
 КЛЕО/ПАТРЕЮ. РОДИЛАСЬ В 1765 ГОДА МАРТА 24-ГО ДНЯ,
 СУПРУЖЕСТВО ВСТУПИЛА 1789 ГОДА АВГУСТА 2-ГО ДНЯ, ЕЕ
 ЖИТИЕ БЫЛО 41 ГОДЪ И ЧЕТЫРЕ МЕСЯЦА...

Ծանոթ.

Ա. Յա. Կակովկիինի "Памятники художественного серебра из армянской церкви св. Екатерины в Петербурге" հոդվածում (ՊԲԴ, 1981, N 2, էջ 213-222) Սարաֆյան ազգանունը բնագրի սխալ վերծանության հետևանքով դարձել է Սարքովեան (տես էջ 217): Այդ սարքովի «Սարքովեան»-ը տեսնում ենք մեկ այլ արձանագրության վերծանության մեջ: 1806 թ. սեպտեմբերի 10-ին, Կլեոպատրայի մահվանից ավելի քան մեկ ամիս անց, Սարգիս (Սերգեյ) Եսայու Լոռու Մելիքյանը ս. Եկատերինա եկեղեցուն նվիրում է ոսկեգոծ մի խաչ «Յաղագս հանգուցեալ զուգակցոյն... Սարիամին, որ է դուստր հանգուցեալ Սովսես Սարքովեանի (ինձա՛ Սարաֆեանի)» (նույն տեղում, էջ 219): Կարելի էր լռության մատնել սխալ վերծանության այս փաստը, եթե խոսքը չվերաբերեր 18-րդ դարի ականավոր գործիչ Սովսես Սարաֆյանին եւ նրա պանծալի դուստր Սարիամ-Կլեոպատրային: Դ՞ զԱՍ Դնագիտության եւ ազգագրության ինստիտուտի վիճակագրական արշավախումբը հարյուրավոր քարակերտ մատուցներ է ընդօրինակել Կրասնոդարի եւ Ստավրոպոլի երկրամասերից, Թաթարիայից, Ռոստովի մարզից, Չեչնիայից, Ղաղստանից եւ Ռուսաստանի Ղաչնուխյան այլեայլ բնակավայրերից: Արձանագրություններում հիշատակվում են ականավոր մտավորականներ, բարձրաստիճան գիմնականներ, հոգեւոր գործիչներ, առետրականներ, արհեստավորներ եւ այլն: Նորահայտ վիճագրերն այժմ մշակվում են եւ առաջիկայում կտպագրվեն «Դիվան հայ վիճագրության» մատենաշարի VIII պրակում:

Հրատ. Գր. Ա. Գրիգորյան

Դ.Մ. Գրիգորյան - *Видные деятели армянской культуры* - В статье на основании lapидарных надписей-эпитафий, представляется культурно-просветительная деятельность Григора Халдаряна - основателя первой армянской типографии в Санкт-Петербурге (1781г.) и Клеопатры (Мариам) Сарафян - составителя первого учебника для российских армян. Биографические данные приводятся в основном из достоверных эпиграфических источников, а также письменных текстов.

Հ. Ա. ՕՐԲԵԼՈՒ ՎԻՄԱԳՐԱԳԻՏԱԿԱՆ ՎԱՍՏԱԿԸ

Գր. Ա. Գրիգորյան

Աշխարհի հնագույն ժողովուրդների հոգեւոր եւ նյութական մշակույթի մեջ անգնահատելի արժեք են ներկայացնում նաեւ արձանագրագիտական սկզբնաղբյուրները, հատկապես վիճակաւ բնագրերը, որոնցով այնքան հարուստ է Հայկական լեռնաշխարհը:

Բազմաբովանդակ ժայռապատկերները, ապա նաեւ սեպագրերը վաղուց ի վեր ծանոթ էին մեր ոսկեղենիկ գրիչներին: Պատմահայր Սովսես Խորենացին Վանի մոտ գտնվող ժայռերից մեկի վրա եղած արձանագրությունը հիշատակելով, գրում է.

«Եւ ոչ միայն այս, այլեւ ի բազում տեղիս արձանս հաստատեալ նովին գրով յիշատակ ինչ իւր հրամայէ (Շամիրամ) գրել. եւ ի բազում տեղիս սահմանս նովին գրով հաստատէր»: Պատմահայրը նշում է «Արտաշիսյան սահմանաքարերի, ինչպես նաեւ Գառնիի հունարեն արձանագրության մասին»: 451 թ. գոյամարտի մասնակից եղիչն վկայում է, որ Ավարայրի ճակատամարտում նահատակվածներից շատերի աճյունների վրա հետագայում դրվեցին արձանագրված մահարձան-կոթողներ.

«Բազում արձանք էին կանգնեալ յանուն նոցա եւ անուանք իւրաքանչիւր նշանակեալ ի նոսա»:

1 Մովսէս Խորենացի, Պատմութիւն Հայոց, Տիփլիս, 1913, էջ 54:
 2 Նույն տեղում, էջ 186:
 3 Եղիշի Վասն Վարդանայ եւ Հայոց պատերազմին, Երևան, 1957, էջ 203:

Հայ վիճազրույթունը, իբրև պատմական հավաստի սկզբնաղբյուր, վաղուց ի վեր եղել է միջնադարյան պատմիչների, իսկ հետագայում՝ հայագետների ու շահրոթյան կենտրոնում: 13-րդ դարի ականավոր պատմագիրներ Ստեփանոս Օրբելյանն ու Կիրակոս Գանձակեցին, իսկ 17-րդ դարում Ջաքարյա Քանաքեռցին, պատմական անցողարժեքները նկարագրելիս հաճախ էին դիմում վիճագրերին՝ երբեմն մեջբերելով, անփոփոխ, ընդարձակ քաղվածքներ:

Վիճագրությունն, իբրև առանձին գիտաճյուղ, ծեւավորվեց եվրոպայում Վերածնության դարաշրջանում: Իտալացի անխոնջ գիտնական Կիրակոս Անկոնացին (1391-1452), որը պսակվեց «Արձանագիտության հայր» մականվամբ, առաջինը փորձեց ստեղծել հնագույն քաղաքակրթություն ունեցող ժողովուրդների հիմնականում լատինատառ «Կորպուս-ժողովածուն»:

1603 թ. Յեյդելբերգի համալսարանի պրոֆեսոր Գրուտեթը, քաջ գիտակցելով «Կորպուս-ժողովածուների» աղբյուրագիտական արժեքը, ընդօրինակեց, դաստասեց եւ հրատարակեց 12 հազար արձանագրություններից բաղկացած դարակազմիկ մի վիթխարի գործ:

Հայ ժողովրդի կերտած «քարակերտ մատյանները» Հայաստանի քաղաքական անբարենպաստ պայմանների պատճառով մնում էին գիտնականների տեսադաշտից հեռու եւ լուրջ առանձին ճանապարհորդ-աշխարհագրագետներ էին հիանում եւ ընդօրինակում պատահական ընտրությամբ առանձին վիճագրեր: Հարկավոր էր գործի ողջ կարելությունը հասկացող մեկը, որը տեղաշարժեր այդ ամբողջ բնագավառը եւ սկիզբ դներ հայ վիճագրագիտությանը:

Այդպիսին հանդիսացավ մեր ժողովրդի մեծանուն զավակ Գ. Օրբելին:

Ենթարտության դեմ չմեղանչելու համար նկատեմք, որ դեռեւս մինչեւ Գ. Օրբելին մի շարք հայ մտավորականներ հրապուրիչ ծրագրեր էին մշակում վիճագրական ատաղձը հավաքելու եւ հրատարակելու համար, սակայն այդ գործը տեղից չչարժվեց, անշուշտ, ոչ նրանց մեղքով:

Հովհ. Ղրիմեցին, Հովհ. Շահխաթունյանցը, Սարգ. Ջալալյանը, Մ. Սմբատյանը, Բժշկապետ Քաջբերունին, Մակ. Բարխուդարյանցը, Վենետիկի Մխիթարյան միաբանության անդամ Մինաս Բժշկյանը կանխագծել էին այն ուղիները, որոնցով պետք է ընթանային Գ. Օրբելին եւ նրանց սերնդակիցները: Այս ծրագրի իրականացման համար պարարտ հող էին նախապատրաստել Ներսես Աշտարակեցին, ապա նաեւ Ղ. Ալիշանը, որի դիպուկ բնութագրությամբ Հայոց վիճագրերը «անխաբ հայելիք են հանճարոյ եւ ոգւոյ նախնեաց մերոց»:

1912 թ. «Հանդէս Ամսօրեայ» պարբերականում ականավոր լեզվաբան Հր. Աճառյանը տպագրեց մի ծանուցում, ուր հայտնում էր, որ ինքը հրատարակության է պատրաստում «Հայարձան» խորագրով մի ժողովածու եւ խնդրում է իրեն ուղարկել վիճական բնագրեր:

1913 թ. Պետերբուրգում ակադ. Ն. Մառի ընդարձակ առաջաբանով (От редактора) լույս տեսավ հայագետ Կարապետ Կոստանյանի «Վիճական տարեգիրը», որը տարբեր հեղինակներից բանաքաղված ժողովածու էր ժամանակագրական սկզբունքի կիրառմամբ: Անշուշտ, սա եւս հեռու էր «գիտական կորպուս» կոչվելուց, թեւ երկար տարիներ հանդիսացավ հայագետների սեղանի գիրքը: Անհրաժեշտ էր մշակել գիտական վիճագրագիտության մեկ ընդունելի սկզբունք, որով ղեկավարվեն բոլոր հետագա հայ վիճագրագետները: Այդ սկզբունքի՝ Պիմեադրույթները Գ. Օրբելին շարադրեց 1914 թ. սեպտեմբերի 6-ին Պետերբուրգի համալսարանում կարդացած իր դասախոսություններից մեկում, որ խորագրված էր «Հայկական վիճական արձանագրությունների գիտական նշանակությունը» վերնագրով: Հայերեն թարգմանությամբ իբրև առաջաբան այն լույս տեսավ «Դիվան հայ վիճագրության» մատենաշարի 1-ին պրակում, որը կազմել էր մեծ գիտնականը դեռեւս Անիում Ն. Մառի հետ կատարած պեղումների ժամանակ:

Ինչպես հայտնի է, Անիի հնագիտական ուսումնասիրություններին, պեղումներին Գ. Օրբելին մասնակցեց դեռեւս ուսանող ժամանակ՝ 1906թ.: Հենց առաջին տարվանից, Ն.Մառի ղեկավարությամբ, նա Անիում սկսեց զբաղվել վիճագրերի ընդօրինակմամբ եւ վերծանությամբ: Այդ ժամանակից ի վեր վիճագրագիտությունը դարձավ նրա հետազոտությունների սիրված բնագավառը:

1909 թ. օգոստոսին Ն. Մառի երաշխավորությամբ Ռուսաստանի կայսերական ակադեմիայի պատմաբանասիրական բաժանմունքը Գ. Օրբելին գործուղում է Խաչեն: Ապագա մեծ գիտնականը ընդամենը 17 օրվա ընթացքում վերծանում եւ ընդօրինակում է շուրջ 270 արձանագրություն... Գանձասարի վանքից, Վաճառից, Կաճառից, Խաչխուրից եւ Ծմակահող գյուղից, Հավապտուկից, Կոշիկ Անապատից, Մեծառանից Ս. Հակոբա վանքից, Խաթրավանքից, Դադի վանքից եւ այլ վայրերից: Խաչենում (այժմյան Լեռնային Ղարաբաղում) եղած ժամանակ Գ. Օրբելին նկատում է պատմությունը կեղծելու այնպիսի մի արգահատելի երեւոյթ, որ դժբախտաբար շարունակվում է նաեւ հետագա տարիներին: Բանն այն է, որ բեկերի մի խումբ Գանձասարի ընդարձակ կալվածները սեփականելու միտումով քերել եւ ոչնչացնել է տալիս Պատմական Հայաստանի Արցախ նահանգի այդ նշանավոր պատմամշակութային օջախի պատերին փորագրված գրությունները, որոնցում հանվանք նշված էին վանքապատկան կալվածներն ու տիրույթները:

Գ. Օրբելին ցանկանում էր առանձին գրքով հրատարակել «Խաչենի հայկական արձանագրությունները», սակայն հանգամանքների բերումով այն տպագրվեց տասնյակ տարիներ հետո՝ 1982 թ. «Դիվան հայ վիճագրության» մատենաշարի 5-րդ պրակում:

Հայ գիտնականներից թերեւս ոչ ոք, քան Գ. Օրբելին բարձր էր գնահատում հայերեն վիճագրերի պատմագիտական արժեքը:

«Հայաստանի կյանքի առավել հետաքրքրական կողմը՝ ժողովրդի կյանքը, ոչ միայն ընտանեկան կենցաղը, կահկարասին, քաղաքային բարեկարգությունը, այլեւ նույնիսկ միջնադարյան հայ քաղաքի հասարակական կառուցվածքը,- գրում է նա,- մնում էին միանգամայն անհայտ, քանի դեռ չէին ուսումնասիրվել վիճական արձանագրությունները, հնագիտական հուշարձանների այն առաջին տեսակը, որը պատմագիտական աղբյուրների շարքը մտավ շնորհիվ Բրոսեի եւ Ղ. Ալիշանի»:

Մենք կավելացնեինք նաեւ Վիկտոր Լանգուային եւ Սեն-Մարտենին:

«Մի այնպիսի նշանավոր կենտրոնի, ինչպիսին Անին է,- շարունակում է Գ. Օրբելին 1914 թ. կարդացած դասախոսության մեջ,- քաղաքային վարչության ներքին կառուցվածքի մասին մենք պատկերացում չէինք ունենա առանց վիճական արձանագրությունների, այսինքն Անիում գոյություն ունեցող քաղաքային խորհուրդների, ավագների խորհրդի, աչքի ընկնող ավագանու եւ այլնի մասին»:

Պատմիչների երկերում հանդիպող հատուկեցտ տերմինները իրական նշանակություն կարող են ստանալ արձանագրական նյութի հիման վրա:

Գ. Օրբելին հատուկ ուշադրություն էր դարձնում արձանագրություններում հանդիպող անվանաբանական (օճոմաստիկ) երեւույթների վրա, գտնելով, որ օտար, մուսուլմանական, մեծ մասամբ արաբական անուններ էին ձգտում ունենալ առաջին հերթին հայ ազնվականության դասի ներկայացուցիչները:

«Հայերեն արձանագրագիտության բնագավառում Անիի դպրոցի եւ հատկապես Գ. Օրբելու վաստակը ոչ միայն նրա հավաքած եւ հրատարակած արձանագրություններն են,- գրում էր ականավոր վիճագրագետ Ս. Գ. Բարխուդարյանը,- այլեւ գերազանցապես այն, որ նա մշակեց եւ հիմք դրեց գիտական նոր մոտեցման դեպի այդ սկզբնաղբյուրները եւ ապա մշակեց նրանց հավաքման ու հրատարակման համար ժամանակակից գիտության բարձր պահանջների ոգով սկզբունքներ եւ մեթոդներ, որոնք ուղեցույցներ դարձան հետագա ուսումնասիրողների համար»:

Այդ սկզբունքներից են.

1. Արձանագրություններն ընդօրինակել անթերի ճշտությամբ:
2. Անխտիր հավաքել բոլոր արձանագրված բեկորները (մեկ բեկորի օգնությամբ բացահայտվեց Հերմոնի դարեվանքի տեղադրությունը):
3. Ընտրություն չղնել կարելու եւ ոչ կարելու կոչված վիճագրերի միջուկ:
4. Ընդօրինակելիս ճշտորեն պահպանել բնագրի գրչագրական առանձնահատկությունները, որոնց միջոցով կարելի է որոշել բնագրի փորագրության ժամանակը:
5. Վերականգնումների ժամանակ պահպանել բոլոր պայմանական նշանները:
6. Պարտադիր նշել մատենագիտությունը (օրինակ՝ Յազլուվեցի ջրհորի հիշատակագրությունը):
7. Եթե բնագիրը հնարավոր չէ լուսանկարել, պետք է այն պատճենահանել շատ զգույշ եւ ստույգ (օրինակ՝ Կազանի համալսարանի իրավաբանական ֆակուլտետի երկրորդ հարկում եղած հայերեն վիճագրի սխալ պատճենահանման հետեւանքով տրտմութիւն բառը կարդացվել է տեր-մուտի):

Հայ ժողովրդի կերտած «քարե մատյանները» բազմահարուստ վկայություններ են պարունակում հայ (եւ ոչ միայն հայ) ժողովրդի անցյալի պատմության, լեզվի, բանագիտության, ազգագրության, սոցիալ-տնտեսական կյանքի, իրավական հարաբերությունների, քաղաքական անցողարժեքի ուսումնասիրության համար: Գ. Օրբելին առաջինը հայագիտության ասպարեզում մշակեց հայկական փակագրերի առանձին տառանմուշներ, որոնցից 500-ը նա հրատարակեց «Խրիստիանսկի Վոստոկ» հանդեսում: Գ. Օրբելին շնորհակալության զգացումով է խոսում իր ուսուցիչ Ն. Մառի մասին՝ նրան համեստորեն վերագրելով վերծանության նոր գիտական մեթոդ ստեղծելու նախապատվությունը: «Նոր նյութեր հայկական վիճագրության» ծավալուն հողվածում Ն. Մառն առաջարկում էր ստեղծել Անդրկովկասի մասնագետներից բաղկացած գիտական արշավախումբ հայերեն եւ վրացերեն լեզուներով կորպուսներ հրատարակելու համար, սակայն այդ կարելու գործը ծախողվեց խանձարուրում:

Գ. Օրբելու ուսումնասիրությունների շրջանում հայագիտությանը հայտնի էին ընդամենը 1500 արձանագրություններ, որոնք նա ցանկանում էր հրատարակել «Կորպուս ինսկրիպտիոնում արմենիկարում» խորագրով: Վերնագրի կաղապարը, ըստ երեւույթին, նա վերցրել էր գերմանացի նշանավոր գիտնական, Բեռլինի համալսարանի պրոֆեսոր Թեոդոր Սոմբոլեի «Կորպուս Ինսկրիպտիոնում

1 Դիվան, պրակ 5-րդ, Երևան, 1982, էջ V:
2 Դիվան, պրակ 1-ին, Երևան, 1966, էջ VII:

«Լատինարում» 16-հատորյա ժողովածուից, որ հրատարակվեց 1863-1913 թթ. ընթացքում:

3. Օրբելին կտրականապես բողոքում էր այն երեւոյթի դէմ, երբ հուշարձանները վերականգնելիս սվաղվում են ծեփի տակ հին գրությունները: Նա զայրացած էր, որ 1912 թ. Օշականում գրերի գյուտի տոնակատարության ժամանակ ծեփել եւ սվաղել էին իրեն արձանագրությունները: Նույն երեւոյթը մենք դիտում ենք նաեւ Հայաստանի սահմաններից դուրս: Իբրեւ օրինակ կարող ենք բերել Թեոդոսիայում գտնվող Յովի. Այվազովսկու պատկերասրահի պատերին եղած հինգ մարմարակերտ հուշագրությունները, որոնք դժվարությամբ բացեցինք տարիներ առաջ:

3. Օրբելին ստեղծեց նաեւ հինգ տարբերանշանները (գծիկ, կախման կետեր, կիսափակագծեր, մեծ փակագիծ, տողատման նշան), առանց որոնց դժվար է ներկայացնել գիտական հրատարակությունները:

Հայկական վիմագրերի բազմահատորյա ժողովածուն հրատարակելու խնդիրը 3. Օրբելին բարձրացրեց Հայաստանի պետական մարմինների առջեւ:

1938 թ. օգոստոսի 20-ին Հայաստանի ժողովուրդը ակադ. 3. Օրբելու զեկուցագրի հիման վրա որոշում ընդունեց, կազմել վիմագրագիտական արշավախումբ՝ Խորհրդային Հայաստանի տարածքում եղած վիմագրերը հավաքելու եւ տպագրելու նպատակով: Արշավախմբի կազմում ընդգրկվեցին ճանաչված հայագետներ Աշխարհաբեկ Լոռու Զալանթարյանը, Կարո Ղաֆադարյանը, Սեդրակ Բարխուդարյանը, Տարագոս Վարդանյանը եւ ուրիշներ: Սակայն այդ գործը ձախողվեց վերահաս 2-րդ Համաշխարհային պատերազմի պատճառով: Ինչպես հայտնի է, Հայրենական պատերազմի դժնդակ օրերին հիմնադրվեց Հայաստանի Գիտությունների ակադեմիան, եւ նրա 1-ին պրեզիդենտ 3. Օրբելին չնոռացավ ծրագրել նաեւ վիմագրագիտության բնագավառը: Ուղիղ 10 տարի հետո՝ 1954 թ. ԳԱ նախագահությունը վերստին անդրադարձավ այս կարելու խնդրին՝ որոշելով ստեղծել վիմագրական արշավախումբ 3. Օրբելու ընդհանուր ղեկավարությամբ:

1959 թ. ԳԱ Հնագիտության եւ ազգագրության ինստիտուտի համակարգում ստեղծվեց առանձին վիմագրագիտության բաժին 3. Օրբելու աշակերտ, մեծանուն վիմագրագետ Սեդրակ Գեւորգի Բարխուդարյանի գլխավորությամբ: Այդ ժամանակից սկսած իր մարմնավորումը գտավ ակադ. Ն. Մառի եւ Օրբելու փայփայած երազանքը. պարբերաբար, սկսվեցին հրատարակվել «Դիվան հայ վիմագրության» մատենաշարի հատորները՝ վարչա-տարածքային եւ ոչ ժամանակագրական սկզբունքի հիման վրա: Առ այսօր հրատարակվել է 7 պրակ:

1966 թ., երկար փորձություններ անցնելուց հետո տպագրվեց «Դիվանի» 1-ին պրակը (2-րդ պրակից 6 տարի հետո): Այն կազմել էր 3. Օրբելին ընդարձակ ներածականով: Պրակում ամփոփված էին 266 արձանագրություններ Անի մայրաքաղաքից եւ նրա շրջակայքից:

3. Օրբելու շնորհիվ, փաստորեն, հավետ կորստից փրկվեցին ճակատագրի բերումով մեզ համար անձեռնմխելի դարձած Բագրատունյաց մայրաքաղաքի բազմաբովանդակ վիմագրությունները:

Պրակն ընթերցողը նկատում է, թե ինչպիսի բարեխղճությամբ, գիտնականին վայել պատասխանատվությամբ եւ գերագույն համբերությամբ է խոշոր արելելագետը հավաքել, համադրել եւ վերականգնել ավելի քան 70 տարի առաջ եղծված, քայքայված ու պակասավոր վիմագրերը: Նրան մտահոգում էր պատմությունը փրկելու նրբազան գաղափարը: Իբրեւ լայնահոդ աղբյուրագետ, 3. Օրբելին վիմական բնագրերն օժտում էր դիպուկ, հակիրճ եւ բովանդակալից մեկնաբանություններով: 3. Օրբելին Ն. Մառի հետ միասին հայ վիմագրագիտությունը բարձրացրեց համաշխարհային գիտության մակարդակի:

3. Օրբելին դարձավ հայ վիմագրագիտական դպրոցի հիմնադիրը: Նրա համոզմամբ՝ ձեռագիր մատյանների հետ միասին հայկական վիմագրերը հանդիսանում են հայ ժողովրդի պատմական անցյալի հիմքերի հիմքը: Ջնջել մեր մագաղաթա եւ քարակերտ մատյանները՝ նշանակում է առհավետ կորցնել ոչ միայն անցյալի պատմությունը, այլեւ հայ ժողովրդի դիմագծի առհավատյան:

3. Օրբելին շտապում էր, շտապում էր ավելի, քան մենք այսօր. վիմական մատյանները գտնվում են բաց երկնքի տակ. մշտապես ենթակա են արելի, անձրելի, քամու, սառնամանիքների ներգործությանը, անգիտակից զանգվածներն անխնայաբար ոչնչացնում են դրանք, պետք է փրկել կործանումից:

Այս կապակցությամբ 3. Օրբելին գրում էր. «Չխոսելով արդեն այն գայնների մասին, որոնք ծածկված են հին շենքերի ավերակների կամ բերածո ավազների տակ, կարելի է պատկերացնել, թե որքան նյութ ենք հայտնաբերելու դեռեւս, եթե նույնիսկ պեղումներով չզբաղվենք, այլ միայն հավաքենք այն, ինչ գտնվում է հողի մակերեսին, եւ այդ գործում պետք է շտապել»:

Այսօր ակադ. 3. Օրբելու աշակերտներն ու աշակերտների աշակերտները մեծ վիմագրագետի առաջադրած սկզբունքների համաձայն՝ գիտական հիմունքներով վերծանել ու հրատարակել են Պատմական Սյունիքի Ձանգեզուրյան տարածքի (1960 թ. - 421 արձանագրություն, ի բաց առյալ Մեղրու շրջանը), Վայոց ձորի (1967 թ. - 813 արձանագրություն), Գեղարքունիքի (1973 թ. - 1547 արձանագրություն), Աղստեղի հովտի (1977 թ. - 355 արձանագրություն), հայ գաղթավայրերից՝ Ուկրաինայի եւ Մոլդովայի (1996 թ. - 776 արձանագրություն) ժողովածուները: Կազմվել եւ տպագրության

է հանձնվել Ռուսաստանի Դաշնության հայերեն եւ հայերին առնչվող այլալեզու վիմագրական հատորը: Տպագրության են պատրաստ կուրի ծախսափնյա շրջանների, Նիզ-Վարաժնունիքի, ինչպես նաեւ Յուսիսային Հայաստանի վիմական բնագրերը: Նկատի ունենալով մեր «քարե մատյանների» հույժ կարելությունը Հայաստանի եւ հարակից երկրների ժողովուրդների անցյալի պատմության համար, ԳԱ նախագահությունը քանիցս անդրադարձել է այս խնդրին եւ ամեն կերպ նպաստել է վիմագրագիտական արշավախմբերի կազմակերպմանը: Առանձնապես կարելուվում է 1986 թ. նոյեմբերի 14-ի որոշումը, որի տակ ուրախությամբ կստորագրեր երջանակահիշատակ 3. Օրբելին:

Այս ծանր օրերին հայ ժողովուրդը եղբայրական ժողովուրդների հետ միասին հանդիսավորությամբ նշում է մեծ գիտնականի ծննդյան տարելիցը: Երեւոյթն օրինական հպարտություն է առաջացնում հատկապես մեր հանրապետության աշխատավորության շրջաններում, որի առաջընթացին զինվորագրվել էր իր պանծալի զավակը՝ Հովսեփ Աբգարի Օրբելին:

Г. М. Григорян - Заслуга акад. И. А. Орбели в области эпиграфики - Академик И. А. Орбели долгие годы занимался сбором и публикацией армянских лапидарных надписей столицы средневековой Армении - Ани, а также исторического Арцаха. И.А. Орбели является основателем научной эпиграфики в Армении, создал принципы дешифровки надписей, обосновал новую школу эпиграфистов республики.

1 Sbu "История Древнего Рима", М., 1971, с. 457.
2 Դիվան, 1-ին պրակ, էջ XII-XIII: